



**GEVORG GYOZALYAN**  
**LAW OFFICE**  
 Advocate license 715

**ГЕВОРГ ГЕЗАЛЯН**  
**АДВОКАТСКИЙ ОФИС**  
 Адвокатская лицензия 715

**ԳԵՎՈՐԳ ԳՅՈԶԱԼՅԱՆ**  
**ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ**  
**ԱՐՏՈՆԱԳԻՐ 715**

375010, Yerevan, Argishti 7  
 room 301, Tel. (374 91) 32-88-39  
 Fax: (374 10) 510256  
 E-mail: [gevorg@lex.am](mailto:gevorg@lex.am)  
[www.lex.am](http://www.lex.am)

375010, Երևան, Արգիշտի 7  
 սենյակ 301, Հեռ. (374 91) 32-88-39  
 Ֆաքս՝ (374 10) 510256  
 Էլ.փոստ՝ [gevorg@lex.am](mailto:gevorg@lex.am)  
[www.lex.am](http://www.lex.am)

375010, Ереван, Аргисhti 7  
 комната 301, Тел. (374 91) 32-88-39  
 Факс: (374 10) 510256  
 эл-почта: [gevorg@lex.am](mailto:gevorg@lex.am)  
[www.lex.am](http://www.lex.am)

**Բ-38/042014**  
**08.07.2014թ.**

**ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ**

**(Պարտադիր կուտակային կենսաթոշակների մասին ՀՀ Սահմանադրական դատարանի թիվ ՍԴՈ 1142 որոշման համառոտ վերլուծություն)**

2014 թվականի ապրիլի 2-ին ՀՀ Սահմանադրական դատարանը կայացրեց թիվ 1142 հայտնի որոշումը (այսուհետև նաև Որոշում), որը վերաբերվում էր «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև Օրենք) մի շարք հոդվածների սահմանադրականությանը: Տվյալ Որոշումը խառնաշփոթ առաջացրեց հասարակության մեջ: Հասարակության մի մասը կարծում է, որ կուտակային վճարներ չպետք է գանձվեն, իսկ մյուս մասը գտնում է, որ պետք է գանձվեն: Ընդ որում գանձվելու օգտին է խոսում նաև պետական հատվածը, տարբեր տրամաչափի պաշտոնյաների «պարզաբանումներով»:

Որպես փաստաբան, բնականաբար ես չեի կարող չուսումնասիրել ՍԴՈ թիվ 1142 որոշումը: Այս առումով, նկատի ունենալով հասարակական լայն գանգվածի հետաքրքրությունն ու շահագրգռվածությունը վերը նշված օրենքի կապակցությամբ, ինչպես նաև առաջնորդվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 87-րդ հոդվածի 7-րդ մասի, ներկայացնում եմ իմ մասնագիտական (խորհրդատվական) կարծիքը (պարզաբանումը) ՀՀ Սահմանադրական դատարանի ՍԴՈ թիվ 1142 որոշման կապակցությամբ, միաժամանակ շեշտելով, որ այն իմ տեսակետն է տվյալ խնդրի նկատմամբ, որով ես ցանկանում եմ օգտակար լինել այն անձանց, ովքեր դրա կարիքը ունեն:

Եվ այսպես, սույն պարզաբանման շրջանակներում ես կփորձեմ անդրադառնալ այն հարցերին, որոնք ավելի շատ են հուզում անձանց, մասնավորապես, պետք է անձինք կատարեն պարտադիր կուտակային վճարներ թե ոչ, հակասահմանադրական և անվավեր ճանաչված նորմերը գործում են թե ոչ, արդյոք անձինք պետք է վճարեն նախկին ամիսների (հունվար-մարտ) համար պարտադիր կուտակային վճարներ թե՛ ոչ:

**1. Պարտադիր կուտակային վճարներ կատարել թե՛ ոչ:**

Նախ պետք է փաստել, որ Սահմանադրական դատարանի (այսուհետև՝ ՍԴ) որոշումը լի է ներքին հակասություններով, որոնք բավականին դժվարացնում են անձանց կանխատեսելու իրենց վարքագիծը, քանի որ վերջիններս չեն կարողանում այն համապատասխանեցնել ՍԴ

որոշմանը: Այդուհանդերձ կարծում եմ, որ պետք չէ ՄԴ-ին ամբողջ ուժով քննադատել, քանի որ ակնհայտ է վերջինիս դրական դերը հասարակության մեջ:

Եվ այսպես, վճարել թե՛ չվճարել: ՄԴ-ն իր Որոշմամբ, Սահմանադրությանը հակասող և անվավեր է ճանաչել Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասը, 7-րդ հոդվածի 1-ին և 11-րդ մասերը, 13-րդ հոդվածի 2-րդ մասը այն մասով, որով չեն ապահովում յուրաքանչյուր անձի հայեցողությամբ իր սեփականություն հանդիսացող աշխատավարձի տիրապետման, օգտագործման և տնօրինման իրավունքը և հանգեցնում են մարդու կամաարտահայտությունից անկախ նրա սեփականության իրավունքի սահմանափակման: Այս հոդվածները ճանաչվել են Սահմանադրության 8-րդ հոդվածի 1-ին մասի, 31-րդ և 43-րդ հոդվածներին հակասող և անվավեր:

Վերը նշված հոդվածները հիմնականում վերաբերում են պարտադիր կուտակային բաղադրիչին, մասնավորապես, որ պարտադիր կուտակային բաղադրիչին մասնակցում են 1974 թվականից հետո ծնված վարձու աշխատողները, նոտարները, անհատ ձեռնարկատերերը (5-րդ հոդ. 1-ին մաս), դրույքաչափերին և վճարման պարբերականությանն ու պայմանին (7-րդ հոդ. 1-ին և 11-րդ մասեր), կենսաթոշակային ֆոնդի փայերի սահմանափակմանը, մասնավորապես, որ դեպքերում անձը կարող է ստանալ գումար (կենսաթոշակի տարիքը լրանալը, 2-րդ կարգի հաշմանդամ ճանաչվելը, ծայրահեղ ծանր վիճակը, ՀՀ քաղաքացիությունից հրաժարվելը):

Ակնհայտ է, որ ՄԴ Օրենքի վիճարկվող հոդվածների մեծ մասում առաջ է քաշում կարևոր վավերապայման, այն է, որ 1974թ. հունվարի 1-ից հետո ծնված անձանցից կուտակային կենսաթոշակ կարող է պահվել (պարտադիր կուտակային դրույքաչափերի մասին, հիմնական խոսքը գնում է Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասում) միմիայն տվյալ անձանց հայեցողությամբ, նշելով՝ «այն մասով, որով չեն ապահովում յուրաքանչյուր անձի հայեցողությամբ իր սեփականություն հանդիսացող աշխատավարձի տիրապետման, օգտագործման և տնօրինման իրավունքը և հանգեցնում են մարդու կամաարտահայտությունից անկախ նրա սեփականության իրավունքի սահմանափակման»: Այսինքն ՄԴ կուտակային կենսաթոշակի պահումը կախվածության մեջ է դրել անձի հայեցողությունից: Ավելին, երբ մենք նայում ենք Որոշման 6-րդ կետին, ապա տեսնում ենք, որ ՄԴ կրկին Օրենքի վիճարկվող հոդվածների կիրառումը կախվածության մեջ է դրել մարդու հայեցողությունից: Մասնավորապես, ՄԴ Որոշման 6-րդ կետում նշում է՝ «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-10-րդ մասերի<sup>1</sup>, 8<sup>2</sup>, 37<sup>3</sup>, 38<sup>4</sup>, 45-րդ<sup>5</sup> հոդվածների, 49-րդ հոդվածի 2-րդ<sup>6</sup> մասի և 86-րդ<sup>7</sup> հոդվածի վեճի առարկա դրույթները համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների շրջանակներում՝ այն սահմանադրաիրավական բովանդակությամբ, համաձայն որի՝ դրանցով նախատեսված իրավակարգավորումները չեն կարող հիմքում ունենալ, մեկնաբանվել և կիրառվել մարդկանց հայեցողությունից անկախ նրանց սեփականության իրավունքի սահմանափակում ենթադրող իրավակարգավորման համատեքստում ...»: Ասվածի լույսի ներքո ավելորդ էմ համարում անդրադառնալ Որոշման պատճառաբանական մասում՝ կարմիր թելի նման ընթացող՝ աշխատավարձը և այլ եկամուտները, որպես սեփականության իրավունք հանդիսանալուն:

Միակ, ըստ իս, խնդրահարույց հարցը այն է, որ ՄԴ հակասահմանադրական և անվավեր ճանաչված նորմերի ուժը կորցնելու ժամկետ է սահմանել 2014թ.-ի սեպտեմբեր ամիսը:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 15-րդ մասի երկրորդ պարբերությունը սահմանում է՝ «... Այդ դեպքում<sup>8</sup> մինչև ակտի իրավաբանական ուժը կորցնելը

<sup>1</sup> Վերաբերվում է կամավոր սկզբունքով վճարներին (մասեր՝ 2-րդ, 3-րդ, 4-րդ)

<sup>2</sup> Վերաբերվում է ինչպես է պարտադիր կուտակային վճարը կատարվում:

<sup>3</sup> Վերաբերվում է մասնակցի կողմից ֆոնդ ընտրելու պարտականությանը:

<sup>4</sup> Վերաբերվում է մասնակցի կողմից ֆոնդ ընտրելու պարտականությանը:

<sup>5</sup> Վերաբերվում է ֆոնդի ակտիվներից գանձվող վճարներին:

<sup>6</sup> Վերաբերվում է կուտակային վճարների վերադարձնելիության երաշխավորմանը:

<sup>7</sup> Վերաբերվում է եզրափակիչ դրույթներին:

<sup>8</sup> Օրենքը հակասահմանադրական ճանաչելը և այդ ակտի իրավաբանական ուժը ավելի ուշ կորցնելը:

ակտը համարվում է Մահմանադրությանը համապատասխանող»։ Ես այստեղ չեմ խոսի ՄԴ այն ակնհայտ թերացման մասին, որ վերջինս ոչ միայն հակասահմանադրական է ճանաչել Օրենքի նորմերը, այլ նաև անվավեր, ինչը, ինչպես շատ արդարացիորեն նշում է սահմանադրագետ Գոռ Հովհաննիսյանը<sup>9</sup>, անհիմաստ է դարձնում հակասահմանադրական ճանաչված նորմերի ուժը կորցնելու ավելի ուշ ժամկետ սահմանելը, քանի որ անհնար է արդեն իսկ անվավեր ճանաչված նորմի ուժը կորցնելու ժամկետ սահմանել, մասնավանդ, որ ՄԴ որոշումները ուժի մեջ են մտնում հրապարակման պահից (Մահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ պարբերություն)։ Միաժամանակ, ենթադրում եմ, որ ՄԴ այդպես է վարվել հիմքում ունենալով «Մահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 8-րդ մասի 2-րդ կետը, ըստ որի՝ «վիճարկվող ակտն ամբողջությամբ կամ մասամբ Մահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելու մասին», որտեղ հակասող և անվավերը կապված են «և» շաղկապով։ Ամեն դեպքում, եթե անգամ այդպես է, ապա այն որևէ կերպ չի արդարացնում ՄԴ-ին։

## 2. Հակասահմանադրական և անվավեր ճանաչված նորմերը գործում են թե՛ ոչ

Եթե շրջանցում ենք վերը նշված «անվավերության» պահը, ապա դուրս է գալիս, որ Օրենքը գործում է այնպես, ինչպես այն ընդունվել է, հետևաբար գործում են Օրենքի առնվազն 5-րդ, 7-րդ և այլ հոդվածները՝ մինչև 2014թ.-ի սեպտեմբերի 30-ը։ Իսկ, քանի որ «Մահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 15-րդ մասի ուժով, հակասահմանադրական ճանաչված ակտերը համարվում են սահմանադրությանը համապատասխանող<sup>10</sup>, մինչև դրանց ուժը կորցնելը, ապա կարելի է նշել, որ Օրենքի նորմերը ամբողջությամբ գործում են։ Խնդիրը այստեղ կայանում է մեկ այլ բանում։ Մասնավորապես, որ ՄԴ Որոշման մեջ բացահայտել է վիճարկվող նորմերի սահմանադրաիրավական բովանդակությունը։ Թե՛ անվավեր և հակասահմանադրական ճանաչված նորմերի դեպքում և թե՛ սահմանադրությանը համապատասխանող նորմերի դեպքում ՄԴ նշել է ԱՆՁԻ ՀԱՅԵՑՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԻՐԵՆԻՑ ԳՈՒՄԱՐ ՊԱՇԵՂՈՒՆ, ուստի բոլորը պետք է ելնել այդ «աքսիոմից», քանի որ հակառակ պարագայում կխախտվի անձի սեփականության իրավունքը, այնպես ինչպես դրան մանրակրկիտ անդրադարձել է ՄԴ իր Որոշման մեջ։ Որպեսզի ասվածը ավելի հստակ լինի պետք է մեջ բերեմ ՄԴ Որոշումից մի քանի դրույթներ. «ՀՀ Մահմանադրության 3-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված է։ «Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են»։ «Բարձրագույն արժեք» հասկացությունն այստեղ վերացական չէ և ունի որոշակի իրավական բովանդակություն։ «Բարձրագույն արժեք» նշանակում է, որ որևէ այլ արժեք, այդ թվում և՛ պետական, և՛ հանրային խնդիրների լուծմանը կոչված որևէ համակարգ, չի կարող ավելի բարձր դասվել։ Մրանից էլ բխում է Մահմանադրության նույն հոդվածի 3-րդ մասով ամրագրված նորմը. «Պետությունը՝ սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք»<sup>11</sup>։ Մեկ այլ տեղ ՄԴ էլ ավելի առաջ գնալով նշում է. «Մահմանադրական դատարանը գտնում է, որ մարդու իրավունքների ապահովման ու պաշտպանության հարցերը չեն կարող ենթադասվել տեխնիկական ու կազմակերպչական ցանկացած բնույթի հանգամանքների, այլ այդ հարցերում իրավակիրառ պրակտիկական պետք է առաջնորդվի սահմանադրական նորմերի անմիջական գործողության և, մասնավորապես, ՀՀ Մահմանադրության 3-րդ հոդվածի պահանջներով»<sup>12</sup>։ Մեկ ուրիշ տեղ ՄԴ նշում է. «Առկա իրավիճակից ելնելով և գործընթացները սույն որոշման պահանջներին և ՀՀ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումներին համապատասխանեցնելու համար անհրաժեշտ է, որպեսզի ՀՀ կառավարությունը և ՀՀ ԱԺ-ն՝ իրենց իրավասության շրջանակներում, համապատասխան իրավակարգավորումներ իրականացնեն՝ պաշտպանելու համար

<sup>9</sup> <https://www.youtube.com/watch?v=ARyVcmgs1wU&feature=youtu.be>

<sup>10</sup> Տվյալ օրենքի անհաջող և հակասահմանադրականությանը այստեղ չեմ անդրադառնում։

<sup>11</sup> Որոշման էջ 27։

<sup>12</sup> Որոշման էջ 59։

մարդկանց սեփականության իրավունքը, այն կախվածության մեջ չդնելով տարաբնույթ տեխնիկական պայմաններից, թույլ չտալով գործող օրենքի հետադարձ ուժով կիրառում, իրականացվող քայլերի հիմքում ունենալով իրավունքի գերակայության սկզբունքի անվերապահ պահպանումն ու վերջինիս վերաբերյալ ՀՀ միջազգային իրավական պարտավորությունները»:

Վկայակոչված իրավական դիրքորոշումներից ակնհայտ է, որ ՄԴ պետական մարմիններին կոչ է անում անվերապահորեն ենթարկվել անձանց հիմնական իրավունքներին և այն չենթադասել տարբեր տեսակի տեխնիկական պայմանների, ավելին թույլ չտալ գործող օրենքի հետադարձ ուժով կիրառում: «Գործող օրենքի հետադարձ ուժով կիրառում»-ը կարծում եմ տալիս է այն բանալին, ըստ որի Օրենքը չի կարող կիրառվել այնպես, որ այն հակասության մեջ մտնի ՄԴ իրավական դիրքորոշումներին: Իսկ ինչ վերաբերվում է այն անձանց ովքեր արդեն իսկ կամավորության սկզբունքով միացել են կուտակային կենսաթոշակի համակարգին, որի մասին նշում կա նաև Որոշման մեջ<sup>13</sup>, ապա այս մասով ՄԴ նշում է. «Միաժամանակ, հաշվի առնելով նաև ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 4-րդ մասում ամրագրված դրույթը, համաձայն որի՝ «Անձի իրավական վիճակը բարելավող, նրա պատասխանատվությունը վերացնող կամ մեղմացնող իրավական ակտերը հետադարձ ուժ ունեն, եթե դա նախատեսված է այդ ակտերով», անհրաժեշտ է, որպեսզի սույն որոշման պահանջներից ու սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումներից բխող նոր իրավակարգավորումները սահմանադրական հիշյալ դրույթի շրջանակներում տարածվեն քննության առարկա օրենքին առնչվող իրավահարաբերություններին մասնակից բոլոր սուբյեկտների վրա՝ առանց ժամկետային սահմանափակման»<sup>14</sup>:

3. Արդյո՞ք անձինք պետք է վճարեն նախկին ամիսների (հունվար-մարտ) համար պարտադիր կուտակային վճարներ թե՛ ոչ.

Կարծում եմ վերը նշված երկու կետերի վերլուծությունը ինձ թույլ է տալիս ասելու, որ իրավակիրառական պրակտիկան պետք է անվերապահորեն ելնի անձանց սեփականության իրավունքի գերակայությունից, ուստի նման պայմաններում չի կարելի անձի եկամուտներից պահել որոշակի գումար՝ առանց նրա համաձայնությամբ: Այստեղ լավագույն լուծումը կարող էր լինել այն, որ անձը զրավոր դիմում ներկայացնել գործատուին՝ նշելով ՄԴ Որոշման համապատասխան, վերը նշված կետերը, և պահանջեր, որ իր եկամուտից, որպես կուտակային կենսաթոշակ, գումարներ չպահվի: Այդուհանդերձ, եթե գործատուն կպահի այն, ապա հորդորում եմ տվյալ անձին դիմել դատարան՝ սեփականության իրավունքի խախտումները վերացնելու պահանջով:

**Ե Ձ Ը Ա Կ Ա Ց Ո Ի Թ Յ Ո Ի Ն**

Ամփոփելով վերը նշվածը պետք է նշեմ հետևյալը: Իրականում ՄԴ Որոշումը ունի բացեր, որոնց մասին սույն կարծիքի մեջ չեմ խոսել: Այդուհանդերձ այդ բացերով հանդերձ ՄԴ Որոշումը ամրագրում է հստակ դիրքորոշում, որ չի կարելի անձից պահել կուտակային վճար առանց նրա համաձայնությամբ: Եզրակացության մեջ չեմ խոսել ՄԴ Որոշման մեջ տեղ գտած Օրենքի այն հակասահմանադրական նորմերին, որոնք հակասում են Սահմանադրության 83.5-րդ հոդվածի 1-ին կետին, ինչպես նաև չեմ խոսել Օրենքի 76-րդ հոդվածի 2-րդ մասի հակասահմանադրականության մասին: Պատասխանելով ներքոշարադրյալ հարցերին.

- պետք է անձինք կատարեն պարտադիր կուտակային վճարներ թե՛ ոչ – անձանցից կուտակային վճարներ կարող են կատարվել միայն վերջիններիս հայեցողությամբ՝ նրանց հստակ արտահայտված համաձայնության պայմաններում.

<sup>13</sup> Որոշման 59-60 էջեր

<sup>14</sup> Որոշման էջ 61:

- հակասահմանադրական և անվավեր ճանաչված նորմերը գործում են թե ոչ – Օրենքի նորմերը գործում են մինչև 2014 թվականի սեպտեմբերի 30-ը (թեև ՄԴ Որոշման մեջ արկա է ակնհայտ սխալ), սակայն այդ նորմերը կիրառելի են կուտակային կենսաթոշակի այն մասնակիցների նկատմամբ, ուրբեր միացել են այդ համակարգին: Միաժամանակ, եթե տվյալ անձինք գրավոր դիմում են, որ այլևս կուտակային կենսաթոշակներ չպահվի, ապա իրավակիրառական պրակտիկան անվերապահորեն պետք է էլնի անձի հայեցողությունից և նրա սեփականության իրավունքից:
- արդյո՞ք անձինք պետք է վճարեն նախկին ամիսների (հունվար-մարտ) համար պարտադիր կուտակային վճարներ թե՛ ոչ – եթե անձը ընդհանրապես դեմ է իրենից կուտակային կենսաթոշակի գումարներ պահելուն, ապա ցանկալի է, որ նա այդ մասին գրավոր հայտնի գործատուին, իսկ եթե գործատուն այդուհանդերձ գումարները կպահի և կփոխանցի որպես կուտակային կենսաթոշակ, ապա անձը կարող է դիմել դատարան սեփականության իրավունքի խախտումները վերացնելու և վնասը փոխհատուցելու պահանջով: Այն դեպքում, երբ անձը կամավոր հիմունքներով միացել է համակարգին, ապա այդ դեպքում հունվար-մարտ ամիսների համար կուտակային կենսաթոշակը ենթակա է վճարման:

Փաստաբան՝

*Գ. Գյուլալյան*

Գ. Գյուլալյան

